Թ. ՏԱՐԻ | Թիւ 2,742 | Կ. ՊՈԼԻՍ. 1905, ՍԵՊՏԵՄԲԵՐ 15 — 28 | 28 ՐԷՃԷՊ 1323 — 15 ԷԻԼՈՒԼ 1321 | ՀԻՆԳՇԱԲԹԻ

بوزانتيون
ارمنيجه يومى وسياسى غزته، صاحب امتياز ومدير مسئولى
بوزانت كچيان
مطبعه و اداره خانه سى باب عالى جاده سنده ٢٣-٢٥ نومروده
دائرهٔ مخصوصه ده در

Բիւզանդիոն

ՀԱՅԱԹԵՐԹ ԱՄԵՆՕՐԵԱՅ

ԱԶԳԱՅԻՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ — ԳՐԱԿԱՆ ԵՒ ԳԻՏԱԿԱՆ

ՏԷՐ ԵՒ ՏՆՕՐԷՆ
ԲԻՒԶԱՆԴ ՔԷՉԵԱՆ

PUZANTION
Journal Arménien Quotidien,
Politique, Financier et Littéraire
Directeur - Propriétaire
PUZANT KÉTCHIAN
Bab-Ali Djaddéssi, № 23-25
CONSTANTINOPLE

ԱՌԱՋԻԿԱՅ ՇԱԲԹՈՒՆ պիտի սկսինք երեսին մէջ հրատարակել մեր Թերթօնը, ՍՓՈՒՌ ԿՂԶԻՆ, որուն հրատարակութիւնը պահ մը դադրած էր Թերթօնիս տեղուոյն պակասութեան պատճառաւ։ Ներկայ շաբթուան ընթացքին երեսին մէջ պիտի աւարտէ հրատարակութիւնը վերջին յօդուածներուն որ կազմուած են ի մասնաւորի Արբեցութեան դէմ պայքարին։ ԿԱՐԴԱԼ ՆԱԵՒ ԱՅՍՕՐ ՉՈՐՐՈՐԴ ԵՐԵՍԸ։

ԻՆՉ ԿԸՍԷ ԳԻՏՈՒԹԻՒՆԸ ԱԼՔՈԼԱՄՈԼՆԵՐՈՒՆ

ԲԺՇԿԱԿԱՆ, ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ՈՒ ԸՆԿԵՐԱԲԱՆԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹԻՒՆ

Բ.

Եթէ Գիտութեան ձայնը մեզ, Թայլատու և նոյն իսկ մէկ աստիճանի արդարացնող եղաւ անոնց համար որ չափաւոր կերպով կ'գործածեն ալքոլը, բոլորովին տարբեր պիտի ըլլայ անոնց համար որ չափազանցութեամբ տրուած են անոր գործածութեան, որ անձնատուր եղած են անոր։ Ուրիշ կերպ ալ կարելի չէ. Որովհետև ալքոլը, իր չափազանց գործածութեան առթիւ, անհուն Թոյն մը կ'դառնայ, ան մարդուն ու մարդկութեան ամենամեծ, ամենահեղ և մահացու Թշնամիներէն մէկը կ'ըլլայ, եթէ ոչ ամենամեծը։ Որքան մարդ սերտ մտերմութիւն հաստատէ ալքոլին հետ, այնքան ան կ'վնասէ, կ'վըտանգէ, կ'քայքայէ, կ'փճացնէ, կ'ոչնչացընէ ամենատանջալի կերպով իր և իրեններուն Թէ' առողջութիւնն և Թէ երջանկութիւնը։

Ո՛չ մէկ արիւնաւոտ պատերազմ, ոչ մէկ համաճարակ այնքան զոհեր չեն ըներ, այնքան անխնայ կերպով չեն հնձեր մարդկային կեանքը, որքան ալքոլը։ Անոր կոտորածը պարզապէս սոսկալի է, ու շատ իրաւամբ այսօր Եւրոպայի ու Ամերիկայի մէջ անհամար ընկերութիւններ ահագին ճիգեր կ'Թափեն աղէտին առաջքն առնելու համար։

Հայերուս մէջ բարեբախտաբար ճշմարիտ ալքոլամոլութիւնն այնքան տարածուած չէ, բայց աղէտը կայ և կրնայ տարածուիլ, պէտք է ուրեմն շատ կանուխէն անոր առաջքն առնել ջանալ ամէն բանաւոր և ազդու միջոցներով։

*** Ալքոլականութիւնն երկու վիճակի մէջ կ'ներկայանայ, սուր և հինցած վիճակներուն մէջ։ Խնջոյքի, հարսանիքի, տօնի ևն. առթիւ արբեցող մէկը սուր ալքոլականութիւն ունի, իսկ այն որ ամէն օր անհագին քանակութեամբ ալքոլ կ'առնէ, ըմպելով յուր ոչ, երկրորդ տեսակին զոհն է։ Այս երկու վիճակներուն մէջ ալ ալքոլն իր չարաչուք գործը կ'կատարէ, ի հարկէ տարբեր աստիճաններով։

Առեն առեն արբեցողի մը մարմինն հեռուէն հեռու կ'նմանի տան մը, որ օրին մէկը բոլորովին ջրով ողողուած է, ջրով կոխուած է, ինչպէս կ'ըսեն գուսաւորները։ Եթէ նոյն իսկ մէկ անգամ պատահի ողողումը, սա շատ մը վնասներ կը գործէ ու իր անջնջելի հետքերը կ'ձգէ տան մէջ։

Իսկ անոնք որ ամէն օր գինիի և մանաւանդ օղիի բազմաթիւ բաժակներ կը պարպեն, կ'նմանին տան մը, որ ամէն անձրեւ գալուն ամէն կողմէն ջուր կ'առնէ։ Տանը վերը ի վերջոյ կ'փտաի, ու օրին մէկն ալ կ'փլչի, իր փլատակներուն տակ Թաղելով նոյն իսկ տան անդամները։

Բայց նկատենք ալքոլականութիւնն ընդհանուր կերպով և Թողունք որ գիտութիւնն ինք խօսի։ Ան պիտի ըսէ ալքոլամոլին՝

ԱԼՔՈԼԸ ՔՈՒ ՄԱՀԱՑՈՒ ԹՇՆԱՄԻԴ Է

Որովհետև ան կ'փճացնէ կամ պիտի փճացնէ առողջութիւնդ, որովհետև ան ակարացնելով կազմուածքդ հիւանդութիւններու տրամադիր ըրած է կամ պիտի ընէ զայն, որովհետև ան արդէն ոչնչացուցած է կամ պիտի ոչնչացնէ կամքդ ու մտաց բանականութիւնդ, այսինքն ան քեզ անասնական աստիճանին բերած է կամ պիտի բերէ, ան քեզ պիտի յիմարացնէ, ան քեզ պիտի Թշուառացնէ, վերջապէս ան քեզ պիտի սպաննէ։ Բայց ասո՛ւ, այսքանով ալ պիտի չբաւականանայ, ան պիտի Թշուառացնէ նաև քու ընտանիքդ, ան պիտի փճացնէ նաև քու զաւակներդ, որոնց մէջ յիմարներ, ալամարներ ջղագարներ պիտի համրես։

Տխո՛ւր և սև՛ պատկեր, որ սակայն ամենափոքր կերպով իսկ չափազանցուած չէ։ Եւ եթէ չես հաւատար՝ տե՛ս փորձերու և քննութիւններու արդիւնքները, տե՛ս սա պերճախօս Թիւերը, եթէ արդէն իսկ բոլորովին փճացած չես, պիտի համոզուիս։

ԱԼՔՈԼՆ ԱՌՈՂՋՈՒԹԻՒՆԴ Կ'ՔԱՅՔԱՅՑՆԷ. — Ներսի չափէն աւելի առնուած ալքոլը մաշելով մարդկային մարմինն մէջ, ընդհանուր խանգարումներ յառաջ կը բերէ հոն, խանգարումներ որ հետզհետէ կը սաստկանան, այնպէս որ խմողին մարմնոյն մէջ չի գտնուիր ո և է մաս մը որ ալքոլէն վնասուած չըլլայ։

Արդարև քննելով

ՄԱՐՍՈՂԱԿԱՆ ԳՈՐԾԱՐԱՆԸ

Կ'տեսնենք որ նախ ալքոլամոլին ախորժակը, այլ ևս բնական տեղը չէ, յառաջ անոր բերանն համ չկայ, կամ աւելի լեզի է, լորձունքը Թանձր, լեզուն դեղնած եւ ճաքճքած, կոկորդը միշտ կ'այրէ, միշտ ծարաւ է, ստամոքսին և աղիքներուն պատերը այրած են, մարսողութիւնը խանգարուած է, պնդութիւն կամ լուծողութիւն ունի, շատ դիւրաւ կ'փսխէ, նոյն իսկ արիւնախառն փսխումներ ունի, ստամոքսը մաղասով լեցուն է ու առաւօտները կ'խնայ միշտ։

ՇՆՉԱՌՈՒԹԵԱՆ ԳՈՐԾԱՐԱՆԻՆ

Անցնելով, կ'տեսնենք իսկոյն խռչափողի բորբոքումը, որ կ'յայտնուի ալքոլամոլին խռպոտ ձայնովը, նոյնպէս անոր հազերն ու Թոքերն իրենց կարգին վնասուած են։

Բննելով

ԱՐԵԱՆ ՇՐՋԱՆԻ ԳՈՐԾԱՐԱՆՆԵՐԸ

Կ'տեսնենք որ ՍԻՐՏԸ մեծցած և լայնցած է, երբեմն ալ անոր միսերուն տեղ ճարպն եկեր բուներ է, այսինքն սիրտը ակարացեր է։ Բարակ երակներուն պատերը կարծրացեր, քարացեր են, ամէն առթիւ պայթելու պատրաստ։

Լ Ե Ա Ր Դ Ը

(Դաշտ ճիյեր), որ ահագին կարևորութիւն ունի մարդկային կազմուածքին համար, հետզհետէ փճացեր է, անոր գործող մասերուն տեղ եկեր բուներ են անգործ ու անպէտ հիւսկէններ։ Եւ վնասակար նիւթեր. դեղներ է ան, երբեմն չափազանց պզտիկցեր, ընդարմացեր է, երբեմն ալ, ընդհակառակն, չափազանց մեծցեր է. երկու պարագաներուն մէջ ալ իր պաշտօնը կատարելու աւելի կամ նուազ անկարող է դարձեր։

ԵՐԻԿԱՄՈՒՆՔՆԵՐԸ

մեծապէս ազդուած ըլլալ չեն Թուիր, բայց ասոր փոխարէն

ՋՂԱՅԻՆ ԴՐՈՒԹԻՒՆԸ

սուէրն ու Հիւլը, սոսկալի կերպով վնասուած են։ Ուղեղին այլ և այլ խանգարումներ կ'ներկայացնէ, այլասերուած է մանաւանդ երբ ալքոլամոլութիւնը շատ յառաջացած է։ Անոր գործօն բջիջները փճացած են մեծ մասամբ։ Ալքոլամոլը գլխի պտոյտ ունի, գլխերները սոսկալի երազներ կ'տեսնէ, կ'բանդագուշէ, կ'զառանցէ։ Ուղեղին այս առաւիճանակը խանգարումը պատճառ կ'ըլլայ որ ալքոլամոլը կամաց կամաց կորսնցնէ իր մտային կարողութիւնները, անոր յիշողութիւնը կ'թմտնայ, դատողութիւնը կ'նսեմանայ, ապուշութիւնը, յիմարութիւնն իւրենց փառաւոր մուտքը կ'գործեն, այնպէս որ ալքոլամոլներէն շատերը յիմարանոցներու ապաւէն հիւրերն են կամ այդպէս ըլլալու արժանի։ Այլ ևս մարդ ըսուելու արժանի չեն անոնք, իրենց մարդկային արժանապատուութիւնն ալ Թունաւորած ու փճացուցած են ալքոլին միջոցաւ. անասուններ են, այլ ևս, անգիտակից իրենց ըրածին ու անպատասխանատու. Հետևաբար մարդկային ընկերութեան համար վտանգաւոր էակներ։ Օրէնքն անոնց ո՛չ մէկ գործողութիւնը չի ճանչնար, այլ ևս, ո՛չ անոնց խօսքը, ոչ անոնց ստորագրութիւնը, ոչ ալ անոնց վկայութիւնը կարեւորութիւն չունին, քանի որ ալքոլամոլը մարդ մը չէ այլ ևս այլ մարդակերպ կենդանի մը, փճացած մասկոյա մը։

Ալքոլամոլին ջիղերն ալ վնասուած են, մանաւանդ ստորին անդամներուն վրայ վնասը զգալի է, ջղաձգումներ ունի, անոր զգայնութիւնը բԹացած է ինչպէս և անոր կամքն ալ ոչնչացած։ Անոր ականջները միշտ կ'դընչեն, աչքերը վատաԹարացած են, չեն տեսներ, հաւկուր ունին։ Ալքոլամոլին շարժումները կորսնցուցած են իրենց ճշտութիւնը, անոր ձեռքերը կ'դողդողան, մասնաւոր կամ ընդհանուր անդամալուծութիւն ունի։ Այս ամէնէն վերջ ընդհանուր դողդողում մը, որ կ'անհետանայ այն ատեն միայն երբ ալքոլամոլն իր Թոյնն անգամ մ'եւս կ'առնէ, քիչ վերջը նորէն երևնալու համար, ալքոլական Թունաւորումի վերջին աստիճանը պիտի ներկայացնէ, զարհուրելի զառանցանքներով և ջղաձգումներով պատկուած։ Պէտք է աւելցնել Թէ քիչ անգամ ալքոլն իր զոհերը մինչև այդ բարձրութեան կ'հասցնէ, որովհետև մահն ընդհանրապէս աւելի շուտով վրայ կ'հասնի ու մեռելին տակառը կ'գլորէ հողին ծոցը։ Այս բոլոր խանգարումները, որոց սաստկութիւնը բնականաբար առնուած ալքոլին քանակութենէն, ինչպէս և ալքոլամոլութեան տեւողութենէն կախում ունի, աստիճանաբար ծնունդ կ'առնեն։ Ալքոլամոլին անհատական կազմուածքն ալ մեծ դեր կ'խաղայ անոնց երևումի կարգին մէջ, բայց այսքան միայն, ալքոլամոլին կազմութիւնն որքան ալ զօրաւոր ըլլայ՝ անպատճառ պիտի խանգարուի։

Անպատճառ երկար ատեն ինքզինքն ալքոլով Թունաւորելու պէտք չկայ այդ խանգարումները կամ գոնէ անոնցմէ մէկ քանին իր մէջ յառաջ բերելու համար։ Երբեմն երբեմն արբեցողն ալ կրնայ վստահ ըլլալ Թէ իր առողջութեանը կը վնասէ չարաչար կերպով, Թէ ալքոլը զինքը կ'Թունաւորէ։

Տեսէք սա բարեկպաստաւոր և միանգամայն խեղճ մարդը։ Տօնի օր մը տօնական յարաբերութիւն հաստատեր է ալքոլին հետ, ու սա առիթը գտնելով զգետներ է զայն։ Անոր քունը կապարէն աւելի ծանր է. քիչ առաջ երերալով, սադին անդին զարնուելով, խնալով ելնելով ամէնուն ծաղրին և արգահատանքին առարկան եղած էր։ Բանի՛ անգամներ գետին ինկաւ վիրաւորուեցաւ, բարկացաւ, սպառնաց, տակն ու վրայ ըրաւ իր և իրեններուն ուրախութիւնը, ժուռալը, տօնական օրն անէծքի օր մ'ըրաւ ու հիմա այսպէս մեռելի նման փռուած կ'մնայ։

Շատ քիչ անգամ ալքոլ կ'գործածեր, բայց այս անգամ չափն անցուց, ու ալքոլն իր դերը կատարեց, այսինքն Թունաւորեց, անասնացուց, անպատուեց։

Բազմաթիւ գիտուններ փորձած են կենդանիներու վրայ փորձառական կերպով յառաջ բերել ալքոլականութեան նշանները, ու մեծապէս յաջողած են։ Օրերով անոնց ալքոլ խմցնելով դիտած են անոնց վրայ ալքոլամոլներուն վրայ տեսնուած ախտանիշերուն և վնասներուն գրեԹէ ամէնքն ալ։

ԱԼՔՈԼԸ Կ'ՀԻՒԱՆԴԱՑՆԷ

Վերի տողերը բաւական են արդէն այս խօսք ճշմարտութիւնը լիուլի ապացուցանելու։ Ալքոլամոլին կազմուածքը ակարացած, խաԹարուած և նոյն իսկ վտանգուած է ալքոլամոլութեան սաստկութեանն և տեւողութեանն համեմատ։ Անոր առողջութիւնը խանգարուած կամ փճացած է. ամբողջ մարմինը հիւանդ մ'է ան, հիւանդ մը որ, ենէ սակայն ալքոլամոլութիւնը վերջին աստիճանին հասած չէ, ԿՐՆԱՅ ԲԺՇԿՈՒԻԼ իր ինքնաբերաբար ժուժկալութեամբ։

ԱԼՔՈԼԸ ՏԱՐԱՓՈԽԻԿ ՀԻՒԱՆԴՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ ՏՐԱՄԱԴԻՐ Կ'ԸՆԷ ՄԱՐԴԸ

Այս կէտն ալ ինքնին դիւրահասկնալի է։ Արդարև, երբ հիւանդութեան մը միքրոբները կ'մտնեն կազմուածքի մը մէջ, սա իր գոյութիւնը պաշտպանելու համար կ'պայքարի անոնց դէմ։ Անոր այդ գոյութեան մաքառումին ելքէն կախում ունի առողջութեան վիճակը։ Եթէ միքրոբները զարգանալու յարմար ու պատրաստ միջավայր մը չգտնեն՝ կ'ջնջուին. հակառակ պարագային բոյն կ'դնեն կազմուածքին մէջ, կ'աճին ու իրենց ներկայութեան նշանները ցոյց կուտան այլ և այլ հիւանդութիւններով, որոնք կրնան նոյնիսկ մահացու ըլլալ։ Հասկնալի է Թէ ո՛րքան կազմուածքն առողջ է, այնքան աւելի կրնայ մաքառիլ իր վրայ յարձակող Թշնամիներուն դէմ։ Ալքոլը տկարացնելով կազմուածքը, մուտքը կ'բանայ իր Թշնամիներուն, որոնք առանց դժուարութեան կ'հաստատուին ալքոլամոլին մէջ։ Սա կ'նմանի բերդի մը որուն բոլոր Թշնամիները և միւս բոլոր պաշտպանողական միջոցները տկարացած կամ փճացած են, հարկաւ Թշնամիները դիւրաւ ձեռք պիտի ձգեն զայն։

Ալքոլամոլութեան, նոյն իսկ խնդիրն ընդհանրացնելով կարելի է ըսել, ալքոլի գործածութեան ամենածանր հետևանքներէն մէկն է ուրեմն կազմուածքն հիւանդութիւններու տրամադիր ընելը։ Ամենաչնչին հիւանդութիւն մը կրնայ ալքոլամոլին համար վտանգաւոր ըլլալ։ Էծփոփոխի պէս մարդն ոչինչ բանով մը կը տապալի։ Շատ կ'խմէր բայց շատ ալ առողջ էր պիտի ըսէք, ես պիտի պատասխանեմ, առողջ չէր կրնար ըլլալ ան, քանի որ շատ կ'խմէր. միայն դուրսէն առողջ կ'երեւար, բայց անոր ներքին կազմութիւնն իսկապէս փճացած էր, ահա ինչու այդ ձեր Էծփոփոխը նոյն իսկ պարզ ցրտառութենէ մը կամ ուրիշ այս տեսակ ամենահասարակ հիւանդութենէ մը գետին փռուեցաւ։

ՏՈՔԹ. ՄԱՐՏԻՐՈՍ ՆԱԼՊԱՆՏ
(Docteur ès-sciences.)

ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՐՑԵՐ

ԱՐՀԵՍՏԸ ՄԻՋՈՑ ՔԱՂԱՔԱԿՐԹՈՒԹԵԱՆ

Բ. (*)

Ուկանտայի Ընկերութիւնը կազմուեցաւ 15,000 ոսկի դրամագլխով, յառաջ տանելու համար այն արհեստագործութիւնը զոր Ուկանտայի միսիոնարները մտցուցած էին Ուկանտայի մէջ, Սուտանի և Նեղոսի ակերուն միջև տարածուող այն ընդարձակ երկիրը, որ անգլ. Թեւարկութեան ներքև կ'գտնուի։ Բնիկներուն մէջ Միսիոնարներուն մտցուցած արհեստներն էին հիւսնութիւն, աղիւսագործութիւն, պարզ շէնքերու ճարտարապետութիւն ու որմնադրութիւն, տպագրութիւն և կազմարարութիւն։ Նորակազմ աշխարհական ընկերութիւնը նպատակ ունի մշակել բամբակ, լաստիկի խէժ, խահուէ, քաքաօ, շաքար, և զանազան հունտեր, վաճառականութիւն հաստատելով ցեղապետներուն հետ։ Ընկերութեան հիմնադիրը, զոր անգլ. Կառավարութիւնը վաւերացուցած է, զինք կ'տարօրէ նաև սեղանաւորական, հողագործական, տարազագործական և առևտրական ամէն տեսակ աշխատութիւններ ու ձեռնարկութիւններ կատարելու, միշտ նպատակ ունենալով յարմար գործ, արհեստ և զբաղմունք ճարել բնիկներուն։ Բաժնետէրերն իրաւունք ունին զուտ շահուն ամբողջութիւնն իրենց համար վար դնելու, Թէև ընկերութիւնը կարող է նպաստել նաև կրօնական կամ մարդասիրական գործերի Միսիոնարական մարմինն այժմ ուրիշ կապ չունի այս արհեստագիտական ընկերութեան հետ, միայն Թէ երկու մարմիններուն անդամներն իրարու բարեկամ և համախոհ են, և Ուկանտայի մէջ ալ գործածուած արհեստի վարպետները կէս մը կրօնական մարդիկ են։ Ուկանտայի մէջ վերջերս «քնախտ»ը (sleeping sickness), կամ քունի Թմրութիւնը բերելով մարդը մեռցնող համաճարակը դրապէս մեծ արգելք յարոյց նորակազմ ընկերութեան դէմ։ Բայց բնիկները գովելի սէր և յարմարութիւն ցուցուցին արհեստի, Թողուցին իրենց յելուզակային, ծոյլ կամ Թափառական բարքերը, և տեսնելով որ արհեստի մէջ օրինաւոր վաստակ կայ, կանոնաւոր աշխատողներ դարձան։ Արհեստագործական միսիոնարութեան պետը տեղեկագրեց Թէ «Բնիկներն յօժարութիւն ցուցուցին արհեստ սովրելու, և իրենց կարողութիւնն ալ փորձով երևցաւ։ Բախտն ունեցանք այս ժողովրդին սովրեցնելու այնպիսի արհեստներ որոց միջոցով կարող պիտի ըլլան զարգացնել իրենց երկրին բնական հարստութիւնները, և դիւրութիւն պիտի չԹողուն օտար արհեստաւորներու՝ գալով իրենց երկրին մէջ հաստատուելու, և իրենց հացն իրենց բերնէն կորզելու։ Բնիկներն իրենք ո՛րչափ արհեստագէտ ըլլան, այնչափ աւելի գործ պիտի գտնեն, և օտար արհեստաւորներու նոյնչափ պէտք պիտի չմնայ։ Կարելի չէ որ Ուկանտա այժմեան վիճակին մէջ մնայ երկար ատեն։ Երկաթուղիներու շինութեան հետ պիտի բացուի արտաքին աշխարհի առջեւ, օտարները խմբովին պիտի գան, և եթէ բնիկներն իրենցմէ սպասուած արհեստական աշխատութիւնները կատարելու անբաւական ըլլան, ստիպեալ հնդիկ արհեստաւորներ պիտի բերուին, որոցմէ հիմակ ալ կայ, և զանազան արհեստներ ի գործ կ'դնեն, զորոնք պէտք էր միմիայն Ուկանտացիներն իւրացուցած ըլլային արդէն։»

Նոր ընկերութիւնը կ'աշխատի նաև տպագրական արուեստը սովրեցնելու բնիկներուն, որպէս զի բնիկ տեղական լեզուով տպագրութեան գործը քրիստոնեայ բնիկներուն ձեռքը մնայ։

Անգլիականներն և սկովտացի Երեցականներն այսպէս բնիկներուն արհեստ սովրեցնելու համար իրենց ասպարէզ ընտրեցին Միջին Ափրիկէն և Հնդկաստանը։ Ժողովականք և ուրիշ յարանուանութիւնք որք կ'օգնեն Լոնտոնի միսիոնարական մարմնոյն՝ նոյն նպատակաւ գործի ձեռք զարկին բրիտանեան Նոր Կուինէայի մէջ։ Այն երկրին բնիկները շատ վայրագ էին, մարդասպանութիւն և մարդակերութիւն տեղային սովորոյթներ էին, բայց կարելի եղաւ զանոնք քիչ քիչ դուրս բերել ո՛չ միայն քարոզութեամբ, այլ և արհեստագործութեամբ, կանոնաւոր ապրուստի միջոցներ մտցնելով անոնց մէջ։ Այս ժողովական միսիոնարութեան պետն իր տեղեկագրին մէջ ըսաւ Թէ «Երբ գործը բարբարոսներու և անքաղաքակիրթ ցեղերու մէջ է, չի բաւեր հոգեւոր փրկութեան վարդապետութեանց վրայ ծանրանալ։ Քրիստոնէական պարտաւորեալաստութեան օրդի լայնաչոյն ըմբռնումը պարտ կ'դնէ մեր վրայ՝ ճանչնալ Թէ հարկ է այս բնիկները կրթել նիւթական բարօրութեան միջոցներով, աշխարհիկ լաւագոյն կեանքի մը իտէալները ցուցընելով անոնց։ Այն ցեղերուն մէջ որք որսորդութիւն և ձկնորսութիւն միայն գիտէին, պէտք է նոր ասպարէզ հայթայթել իրենց ֆիզիքական կորովին համար, և նոր զբաղմունք իրենց դատարկապորտութեան համար։ Աշխարհի ամէն կողմն այսօր քաղաքակիրթ բարձրագոյն ցեղերը չփման մէջ կ'մտնեն անոնց, Թերակիրթ ցեղերու հետ, և հարկ անհրաժեշտ է այս վերջինները վարժեցնել ուժիմ, աշխատասէր, կանոնաւոր կեանքի, իրենց ապրուստը շահելու օրինաւոր արհեստագործութեամբ, սա Թէ ոչ՝ բռնակիրք, չքերի, փայտահատի վիճակին մէջ պիտի մնան, և այս ստորադաս դիրքէն և նուաստ կացութեան մէջ, առաջուընէ աւելի գծուծ և անշահ տարր մը պիտի կազմեն։ ԸնԹերցում, գիր և հաշիւ սովրեցնել անհրաժեշտ է, Աւետարանի քարոզութեամբ միասին։ Բայց նաև հոգ պէտք է տանինք կանոնաւոր աշխատութեան սովորոյԹները մտցնելու իրենց մէջ, այն համոզումը ներշնչելով իրենց Թէ պարկեշտ աշխատութիւնը պատուաբեր է, և արժանի է մարդուս բարձր կոչումին, և Թէ իրենցմէ ամէն ոք իրաւունք ունի և պարտք ունի իրենց բնիկ հասարակութեան օգտակար մէկ անդամն ըլլալու՝ ո՛ և է արհեստ մը ի գործ դնելով։ Բնիկներուն այս գաղափարները տալ ուրիշ ամէն միջոցէ աւելի կ'նպաստէ զիրենք բարձրացնելու, և յառաջդէմ ընԹացքի մէջ դնելու։»

Որովհետև սոյն միսիոնարական մարմին ինքնին կարող չէ Նոր Կուինէայի պահանջած արհեստական եւ առևտրական

(*). — Տես. Սեպտ. 1է Թիւն, և վեր։

ՆՈՐ ԹԵՐԹՕՆ «ԲԻՒԶԱՆԴԻՈՆ»Ի (31)

ԼՈՒԻ ԺԱՔՕԼԻՕ

ԿՈՐՍՈՒԱԾ՝ ՈՎԿԻԱՆՈՍԻՆ ՎՐԱՅ

ԵՐՐՈՐԴ ՄԱՍ

ԴԱԴԱՐԻ ՄԸ ԴԺՆԴԱԿ ՀԵՏԵՒԱՆՔՆԵՐԸ

Բ.

Որքա՜ն աղէկ պիտի ըլլար եթէ ՊարԹէս իր որոշումը գործադրէր անմիջապէս. այդ պարագային պիտի կրնար զերծ մնալ ամենածանր հետեւանքներէ. բայց կեանքի մէջ վայրկեաններ կան ուր մարդ կարծես կ'մտնայ խոհեմութեան ամենատարրական պայմանները։ Պարթէս տակաւին ուԹ օր Սան—Ֆրանչիսքօ մնալ պարտաւորուած էր Ֆհօի յուղարկաւորական արարողութեան համար, զոր ժամ մ'իսկ կորճեցնել չպիտի ուզէին Լի—Հունկ և Չէ—Ուանկ. ասկէ զատ դեռ իր ձեռքը չունէր պէտք եղած մարդիկը, որպէսզի կարենար ըսել Թէ «հոս միակ կամք մը գերակշիռ պէտք է ըլլայ և այդ իմս է»։ Ուստի երիտասարդն յաջորդ օրուան Թողած էր Ուասրթօնկի ընկերք առաջարկները, մանաւանդ որ անձապարելու պէտք չունէր արդէն։ Իր դիտումն էր միենոյն առԹիւ ես առնել ալ դատարանին այն որոշումը, որով կ'պարտաւորուէր հարիւր հազար տոլար յանձնել իբրև երաշխաւորութեան գումար. և որովհետև այդ որոշումն արձակող բարձրագոյն ատեանը նիստ չունէր նոյն օրը, բոլոր պարագաները միացեր էին, զուր տեղն անցնելու համար քանի և չորս ժամեր, որոնց իրեն համար այնքան Թանկագին ըլլալն ալ միթէ չէր անցներ արդէն։ Իրիկուան դէմ մինչ Պարթէս մինակ էր սենեակը, Լը Լիւքէն եկաւ իրեն իմացուց Թէ Լանժալէ կ'փափաքի հետը խօսիլ այնպիսի բանի մը համար որ բնաւ չէր կրնար յետաձգուիլ։ Բարիզցին՝ իր ետևէն ունենալով Բօրնիքը, փուԹկոտ և մտազբաղ դէմքով մը ներկայացաւ Պարթէսի, ըսելով.

—Տեսա՛յ զինքը, հրամանատա՛ր հիմա տեսայ զինքը. Ֆհօի դագաղը դիտելու երևոյԹին տակ շոգենաւուն ամէն կողմը ուշադիր աչքէ անցուց. եթէ չէք հաւտար, Բօրնիքի հարցուցէք։

—Այդ ինչ դէմք ես առեր, խեղճ Լանժալէ. և չեմ հասկնար ալ Թէ որո՛ւ վրայ կ'խօսիս։

—Այն մարդուն վրայ, որ Նաւմէայի մէջ Մ. տը Սէն—Ֆիւրսի կ'կոչէր ինքզինքը։ Գիտէք արդէն ինծի ըրած առաջարկները. լաւ ուրեմն, հոս է այդ մարդը։

—Դո՛ւն, դո՛ւն ինծի խօսած ես Մ. տը Սէն—Ֆիւրսիի վրայ. խելքդ գլուխդ ժողվէ, Լանժալէ՛։

—Ո՛հ, ճիշդ է, հրամանատար. ներեցէ՛ք. Բօրնիքի և Ֆհօի միայն պատմած էի եղածները։

—Պատմէ՛ ուրեմն քեզի այդչափ չփոԹեցնող իրողութիւնը։

Ասոր վրայ Բօրնիք խօսք առաւ և ըսաւ.

—Ներեցէ՛ք, հրամանատար, որ մեր Բարիզցի բարեկամին խօսքը կ'կտրեմ. Լանժալէ չափազանց չփոԹեցաւ այդ մարդուն հոս տեսնելով։ Պէտք է ըսեմ որ որիկային մէկը ըլլալու է անիկա, որ Նոր—Քալետոնիայ մէջ կեղծաւորաբար կ'տեսնուէր հետս, ապօրէն առաջարկներ ընելով։ Ես երեւ չաւոր իրեն, հասկցուցի Թէ իր կարծած մարդոցմէն չեմ, ասոր վրայ անիկա Լանժալէի հետ բարեկամ եղաւ և հիմա մեր Բարիզցի բարեկամը շատ զարմացաւ, երբ զինքն իր նաւուն մէջ Ֆհօի դագաղին առջև տեսաւ։

Բօրնիք իր նաւաստիի ռամիկ լեզուով և այն աստիճան ծիծաղաշարժ շարժուձևերով կ'ընէր այս խօսքերն որ Պարթէս չկրցաւ խնդուքը զսպել։

—Շատ լաւ, Բօրնիք, ըսաւ, շատ լաւ, այդ ըսածներդ աղէկ, բայց մէկ բան մը միայն մոռցար։

—Ի՞նչ բան, հրամանատար։

—Չըսիր Թէ այդ մարդն ի՛նչ կ'ուզէր Լանժալէէն։

—Օ՛հ, անիկա չեմ գիտեր, իրենց տեսակցութեան ներկայ չէի։

Ասոր վրայ Բարիզցին վերստին խօսք առաւ և ըսաւ.

—Շատ պարզ է, հրամանատար, այդ Մ. տը Սէն—Ֆիւրսին ինծի կարգ մը ալ ուրիշ առաջարկներ ըրաւ։ Ըսաւ Թէ ներսումս ձեռք պիտի բերէ, ինծի հողեր և դրամ պիտի տայ, ևն. պայմանաւ որ Չինացիներուն հետ Նոր Քալետոնիայէն փախչելէ ետքը, նամակով կամ հեռագրով իմացնեմ իրեն ո՛ւր երԹալնիս, և մանաւանդ Ֆհօի և իր ընկերներուն Չինաստան հասնելէն ետքն ուր հաստատուելնին։

—Ամէնն ա՞յս է։

—Այո՛, հրամանատար։

—Տարօրինա՛կ, շատ տարօրինակ բան, ըսաւ Պարթէս մէկ քանի վայրկեան մտածկոտ մնալէ վերջը։

Գ

Երիտասարդը չէր կրնար գուշակել այս միջադէպին իրական պատճառը, որովհետև իր հայրագիրը Թէև պատմած էր ուստատպետական գաղցուած ցուցը վերստին ձեռք ձգելու համար Ֆրանսայի մէջ ըրած ջանքերուն փորձը, բայց խոհեմաբար զգուշացած էր խօսակցելէ Թէ ինք ալ իբրև վրէժխնդրութիւն գողցած էր Ֆրանսական արուեստագիտուէէն՝ աշխարհի մէջ գտնուած ամէնէն Թանկագին ադամանդը, և Թէ այդ ցուցին վերադարձնելուն հետ մէկտեղ, վերջյիշեալ ադամանդն ալ ուստատպետէհին յանձնուած էր իբրև Քուանկի նուէրը։

—Այո՛, շատ տարօրինակ բան, կրկնեց Պարթէս։ Այս մարդը, որ կ'ըսուի Թէ Նոր Քալետոնիայ դատաւոր Բրէվօ—Լըմէռի բարեկամն է, ինչպէ՞ս կրցած է գիտնալ Ֆհօի փախուստի ծրագիրը։

—Չգիտեմ, բայց պէտք է որ անիկա գիտցած ըլլար առաջուընէ. եթէ այդպէս չըլլար, ինծի տուած պաշտօնը գոյութեան պատճառ չպիտի ունենար։

—Ճիշդ է... մանաւանդ Թէ Բօրնիքի ալ ըրած է այդ առաջարկը։

—Այո՛, հրամանատար, յարեց այս վերջինը. կ'ուզէր փախուստի ծրագրին մասին լուր ունենալ. կ'ուզէր օձիքնէս բռնել անուշութեամբ։

—Կ'սխալիս, Բօրնիք, քանի որ իմացած էր Չինացիներուն փախուստի ծրագիրը, շատ դիւրին էր ջուրը ձգել զայն, ու մեզ տակաւին Նաւմէա պիտի գտնուէինք հիմա։ Ո՛չ, ուրիշ բան մ'ըլլալու է խնդրոյն մէջ։ Բայց ի՛նչ. անիկա պէտք է գուշակել. ամէն պարագայի մէջ մեզի նպաստաւոր բան մը չի կրնար ըլլալ։ Դազանի Թշնամի մ'ալ այս է, որուն վրայ հարկ է ըսել. բայց դուն ի՛նչ պատասխանեցիր իր առաջարկին, Լանժալէ։

—Ընդունեցայ։

—Ինչպէ՞ս կ'ըլլայ այդ, քանի որ դուն մեր հաւատարիմներէն ես։

—Մտածեցէք սակայն, հրամանատար, պէտք էր որ այդպէս ընէի. եթէ մեր չուրջը գտնուողները բոլորն ալ մերժէին, այն ատեն ի՛ր մարդոցմէն պահնորդներ պիտի դնէր Ֆհօի և իր ընկերներուն վրայ հսկելու։

—Ճիշդ է, խելացի տղայ մ'ես դուն։

—Միթէ բան մ'եկաւ, հրամանատար։

—Ի՞նչ։

—Քանի որ մէկը չի գիտեր Թէ այդ մարդն ի՛նչ կ'ուզէ մեզմէ, մէկ միջոց մը կայ անիկա հասկնալու. իրե՛ն հարցնենք։

—Շատ պարզամիտ մտածում մ'է այդ։

—Ներեցէք որ ըսեմ Թէ կարծուածին չափ պարզամիտ գաղափար չէ այդ, հրամանատար. բացայայտ է Թէ այդ մարդն աղէկութիւն չուզեր մեզի. հետևաբար ամէն բան ներելի է Թշնամիի մը դէմ։ Ապահովաբար նորէն պիտի գայ ալքատայ հոս. ինքզինքս պիտի ճանչցնեմ իրեն եթէ արդէն ճանչցած չէ զիս՝ ծպտումիս տակէն։ Այն ատեն ես ճիշդ իր ուզածին պէս առատ տեղեկութիւններ կուտամ իրեն, և իրիկուան մը ծուղակի մը մէջ կ'ձգեմ զինքը, կ'կապենք, բերանակապ կ'դնենք և հոս կ'բերենք, կ'փակենք խցիկի մը մէջ մինչև որ բաց ծովն ելլենք։

—Արդեօք ինչպէ՞ս եղած է որ Սան—Ֆրանչիսքօ կ'գտնուի։

—Բնական է անիկա, հրամանատար։ Բարիզի իր հասցէն տուաւ ինծի, որովհետև հոն պիտի ուղղէի իրեն զրկելիք տեղեկութիւններս. այս պարագային անհրաժեշտ էր որ Ֆրանսա դառնար։ Ապահովաբար Նաւմէայի մէջ այլ ևս գործ չունենալով, հոնկէ մեկնող առաջին շոգենաւը նստած է, որ զինքը Սան—Ֆրանչիսքօ բերած է, ուրկէ տասնըհինգ օրէն կրնայ Բարիզ հասնիլ։

—Կ'հասկնամ անիկա, բայց ճիշդ մեր հոս գտնուած ատեն իր ալ հոս հասնիլն է որ զարմանք կ'պատճառէ ինծի։

—Սրընթաց շոգենաւի մը հանդիպած ըլլալու է։ Ասկէ զատ պէտք չէ մոռնալ որ ջուր և ածուխ առնելու համար կանգ առինք Նոր Զելանտայի և Սանտուիչի առջև։

—Ճիշդ է այդ կերպով իբր ութ օրուան կորուստ մ'ունեցանք։ Արդեօք ճանչցա՞ւ մեզ։

—Չգիտեմ, բայց շատ մտազբաղ կ'երևար Ենէը այցելած ատեն. իրեն հետ միասին նաւուն մէջ պտտող Ամերիկացիներուն հետ բաղդատելով իր դէմքը, շատ դիւրաւ կ'հասկցուէր Թէ պարզ հետաքրքրութեան համար եկած չէր հոն։

—Ձեր երկուքին պատմածն այնքան տարօրինակ է, որ ամենաւս ապահովութեան համար պարտաւոր եմ ամէն ինչ փորձելու, իր հետապնդութեան գաղանիքն իմանալու համար։ Մարդ մը, որ նախ Թոյլ կուտայ որ փախչինք, և յետոյ կ'հետապնդէ մեզի, շատ վտանգաւոր հակառակորդ մը կրնայ ըլլալ։ Մեր փախուստի ծրագիրն եթէ յայտնէր Թիւրանի հրամատարին, շատ դիւրաւ կրնար անկարելի դարձնել զայն։ Ինչ կրնայ յուսալ մեզմէ փախչելնէս ետքը, զոր կարողացած չէր ձեռք ձգել տակաւին Թիւրան գտնուած ատենս։ Որքա՛ն ալ միտքս յոգնեցնեմ, չեմ կրնար համոզիչ պատասխան մը գտնել. Բայց խոհեմութիւն չէ այսպիսի Թշնամի մը Թողուլ մեր ետին, ուստի ամէն արտօնութիւն կուտամ ձեզի. խոհեմութեամբ գործեցէք, այնպէս որ պատճառ չըլլաք նոր խնդիր մը հանելու Սան—Ֆրանչիսքօի իշխանութեանց հետ։

—Վստահ եղէք մեր վրայ, հրամանատար, մեղմութեամբ պիտի գործենք ու ո և է դժգոհութեան պատճառ չպիտի ըլլանք ձեզի։

(Շար.)

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԱՆՀԱՏԱԿԱՆ ՀԱՎԱՔԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ԵՐԿՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՕԳՏԱՏԻՐՈՋ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀ Ս. ՍԱՐԳՍՅԱՆԻ

«ՀԻՄՆԱԿԱՆ ՄԱՍԻՆ»

ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԿՈՂՄԻ ՈՐՈՇՈՒՄԸ

ՀՀ ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻ

ՀՀ ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ

տուրն։ Հետեւաբար, օգտակար է ընթերցողին համար ծանօթանալ բրօֆ. Մաքս Այնպօրնի այն պատուէրներուն և կանոններուն զորս Գերմանական Հանդէսի մը մէջ հրատարակեց և ուրկէ այժմ կ'քաղենք կանոնաւոր ուտելու և արագ կամ յամր ուտելու մասին իր դիտողութիւնները։ Կանոնաւոր ուտելու մասին Աստուածաշունչին մէջ ալ յիշատակութիւն կայ արդէն, թէ «Քրտամբ երեսաց քոց կերիցես զհաց քո»։ Ճաշի նախապատրաստական ուղիղ կանոնը, ճաշէն առաջ լաւ աշխատութիւնն ու ճաշէն ետքն ալ հանգիստ ընելն է։ Աշխատութիւնը պէտք մ'է. բայց զգուշանալու է չափազանց պարտասուելէ և տառապելէ, զի այն ատեն, ամփոփաբար մարդուս ախորժակը կ'կորսուի կամ մարսողութիւնը կ'դժուարանայ։ Ճաշի համար ալ հանգստ և անզբաղ ժամ որոշելու է։ Ճաշի ատեն զբօսով կամ մտքով զբաղելու չէ. մարդ պէտք է գնրագոյն գործ մը նկատել ճաշը, և կատարել ուշադրութեամբ անոր նախիրէ ընկալինքը։ Մէկչկը անուրանալի է որ հաճելի ընկերութիւն մը և թեթեւ, զուարթ խօսակցութիւն մ'ալ կ'աւելցնեն կերակուրին ճաշակը։ Ժամանակէ մի վեր զրկենք, մանաւանդ քով ալի խուզարկութիւններէն թէ ուղեղը գործունէութիւնը մեծ դեր ունի մարսողութեան վրայ։ Մենք մտահոգութիւններն ոչ միայն մարդուս ախորժակը կ'գոցեն, այլ և մարսողութեան խանգարում կ'պատճառեն։ Այս մասին ուղեղին գործակցութիւնն յայտնի է աս պարագայէն որ մարդ երբ համեղ ճաշակ կամ նախասիրած մէկ կերակուրը տեսնէ, ախորժակը կ'բացուի անմիջապէս։ Ասկէ կ'հետեւի թէ կերակուրներուն արտաքին տեսքը, պատրաստութեան եղանակը, զանոնք իրենց մէջ կրող պնակներուն մաքրութիւնը մեծ կարեւորութիւն ունին ուտողին համար։ Գիտնալ պէտք է նաեւ որ կերակուրները լաւ ծամելով և լորձունքի հետ խառնուելով դիւրաւ կ'մարսուին։ Բրօֆ. Այնպօրն խորհուրդ կուտայ կերակուրի ատեն ջուր խմել մերթ ընդ մերթ չափաւոր քանակութեամբ, զի առով կ'բացուի ախորժակը, ուտելու փափաքը կ'զօրանայ և ջուրն երայլխաւորութիւն մ'է վերջապէս շատ տաք պատառ չկլլելու։ Ճաշէն ետք, պէտք է հանգարտ մնալ պահ մը, աշխատութեան սկսելէ առաջ։ Իսկ արագ ուտելն ալ, դժբախտաբար սովորութիւն եղած սխալ մ'է։ Կերակուրները պէտք եղածին պէս չծամուած կլլելով, մարսողութիւնը կ'դժուարանայ, որով ստամոքսի և աղիքի զանազան հիւանդութիւններ յառաջ կուգան։

Շատ արագ ուտելու, կամ շատ տաք կամ պաղ ըմպելիք խմելու հետեւանքները բազմադիմի են։ Մանր ուտելը, ընդհանրապէս հազուագէպ է. և բժիշկներն ընդհանրապէս կերուածէն անոնք առնելու համար խորհուրդ կուտան ծանր ուտել։ Բայց ասոր չափազանցութիւնն ալ վնասակար է. մարդուս ախորժակը կ'գոցուի շուտով. և պէտք եղածէն չափ սնունդ չի կրնար առնել։ Այս ալ կ'պատահի ընդհանրապէս ճաշէն առաջ չափազանց մտահոգութեան կամ յուզման ենթարկուելով, ուրկէ զգուշանալ անհրաժեշտ է։

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

ԱՅՍՕՐՈՒԱՆ ՊԱՇՏՕՆԱԿԱՆՔ

Ուլայի Ա. աստիճան տրուեցաւ Կայս. Սուրբէի ուսանողապետ և նկմտական ժողովոյ անդամ Սալահէտտին էֆ.ի։ Ուլայի Բ. աստիճան՝ Տպագրական Տնօրութեան օգնական Ապտ—իւլ—Վէհապ պէյի, և Միւթեմայիզի աստիճան՝ նոյն Տնօրութեան Գ. քննիչ Նայիլ պէյի և Սալիհէի աստիճան՝ քարտուղար Ճէվտա պէյի։ Գ. Մէճիտիէ պատուանշան տրուեցաւ ստուգաբանական քննիչ Ահմէտ Խաթապ էֆէնտիի։ Դ. Օսմանիէ՝ Տպագրական Տնօրութեան պաշտօնաթուղթերու պաշտօնեայի օգնական Էսատ պէյի, և Սիրքէճիի Նաւամատոյցի երկրորդ գամբէտր Իսմայիլ էֆ.ի։ Շէֆգաթի Ա. կարգի պատուանշան տրուեցաւ Պէյկէթօղլի ստուգաբանութեան պաշտօնեայ Վասըֆ փաշայի տիկնոջ, և Բ. կարգի Շէֆգաթ՝ աղջկանը։ Լիազուլ ոսկի շքադրամ տրուեցաւ Կայս. Պալատան թարգման Մէհմէտ Իզզէթ և Վէլի պէյերուն և Ցօվհաննէս պէյի։

ՏԽԱԽՈՏԻ ՌԷԺԻՆ.— Տխախոտի Ռէժիին Ընդհ. Ժողովը երէկ նրատ գումարեց ժամն երկուքին, Ղալաթիոյ կեդրոնատեղիին մէջ, նախագահութեամբ Վարչական Խորհրդոյ նախագահ Պառոն Նէօֆլիզի։ Դիւանը կ'կազմէին վարչական խորհրդոյ անդամ Տոքթ. Բօլ Շվապախ, հրատատար Պէռժէ, Մ. Մ. Եանքօ, Ա. Նիսոս, Թէսթա, և Պառոն Վանտէօվր, Ռէժիի Կայս. Քոմիսէր Նուրի պէյ, Օսմ. Հանր. Պարտուց Վարչութեան քոմիսէր Շէֆիգ պէյ, Սակարանի քոմիսէր Նուրի պէյ, Ռէժիի ընդհ. Տնօրէն Մ. Ռամպէր, եւ բաժնետէր Մ. Մ. Մալթաս և Պօսի։ Մ. Կէրիյօ քարտուղարի պաշտօն կ'վարէր։ Ներկայացուած էր 64,260 բաժնեթուղթ և ներկայ էին 23 բաժնետէրեր։ Մ. Վէրնոնի կարդաց տեղեկագիրը, ուրկէ կ'հասկցուի թէ 1904 Մարտ 1—1905 Մարտ 1՝ 21րդ տարեշրջանի հասոյթն եղած է 2,450,571 օսմ. ոսկի, եւ ծախք՝ 1,377,386 ոսկի, որով հասոյթից տարբերութիւնը կ'ըլլայ 1,073,184 ոսկի. հանելով Օսմանեան Հանրային Պարտուց Վարչութեան բաժինը, 750,000 ոսկի, զուտ հասոյթը կ'ըլլայ 323,184 ոսկի, 20րդ տարեշրջանին գոյացած հասոյթէն 95,098 ոսկի պակաս։ Զուտ հասոյթը հետեւեալ կերպով բաժնուած է. — Դրամագլուխի տոկոս՝ 8 %էն՝ 140,800 ոսկի, հիմնադրաց բաժին 5 %էն՝ 9,119 ոսկի։ Այս երկու գումարները զեղչելով զուտ հասոյթի գումարէն, կ'մնայ 173,265 ոսկի, որ բաժնուած է հետեւեալ կերպով. —Օսմ. Կառավարութեան՝ 30 %էն՝ 51,979 ոսկի, Օսմ. Հանրային Պարտուց Վարչութեան՝ 35 %էն՝ 60,643, բաժնետէրերուն՝ 35 %էն՝ 60,643 ոսկի. գումար՝ 173,265 ոսկի։ Վերաբերեալ ու—զուտ հասոյթի գումարը՝ 1,073,184 ոսկի, բաժնուած է հետեւեալ կերպով.— Շահակիցներու (co—intéressé)՝ 86,622 ոսկի, բաժնետէրերու՝ 201,443, հիմնադրաց՝ 9,119 ոսկի։ Գանք մանրամասնութեանց. — Հասոյթ. — Գործուած ծխախոտ՝ 1903—1904ին գոյացած էր 2,271,242 ոսկի, այս գումարը 1904—1905ին ինկաւ 2,205,699ի, այսինքն 2,88% պակաս = 65,542 ոսկի։ 20րդ տարեշրջանին ծախուած էր 7,883,948,987⅔ քիլօ ծխախոտ, որ 21րդ տարեշրջանին ինկաւ 7,427,513,656 5/12 քիլօի, այսինքն 5,79% պակաս = 456,435.331¼ քիլօ։ 21րդ տարեշրջանին քիլօն ծախուեցաւ 29,70 ղր.ի՝ ոսկեդրամ. իսկ 20րդ տարեշրջանին՝ 28.81 ղր.ի՝ ոսկեդրամ։ —Վաճառման արտօնագիրներէն հասոյթ գոյացաւ 16,769 ոսկի, 20րդ տարեշրջանին մէջ գոյացած հասոյթէն 248 ոսկի աւելի։ — Արտածման եւ ներածման տուրքերէ գոյացած հասոյթն 3,418 ոսկի պակաս եղաւ. զի 1903—1904 արտածման տուրքէ գոյացաւ 128,988 ոսկի, եւ ներածման տուրքէ՝ 7,538 ոսկի, գումար՝ 136,526 ոսկի. իսկ 1904—1905ի արտածման տուրքէն գոյացաւ 125,766 ոսկի, իսկ ներածման տուրքէ՝ 7,341 ոսկի, գումար՝ 133,908 ոսկի։— Պաղատար կուսակալութեան հասոյթն 1903—1904 եղած էր 66,683 ոսկի, իսկ 1904—1905՝ 63,532 ոսկի, այսինքն 3,150 ոսկի պակաս։ — Տոկոսի գումարն եղաւ 15,015 ոսկի։ — Այլ և այլ հասոյթներու գումարը 21րդ տարեշրջանին յանգեցաւ 16,446 ոսկիի, ընդդէմ 10,180 ոսկիի՝ 20րդ տարեշրջանին, հետեւաբար՝ հասոյթի տաւելութիւնն է 6,266 ոսկի, որ արդիւնք է արտածութեանց յաւելման։— Հիմա գանք Ծախսերուն. — Թէեւ ըսուեցաւ թէ գործուած ծխախոտներէ 2,205,699 ոսկի հասոյթ գոյացաւ, բայց այս ծխախոտներ 555,694 ոսկիի նստած էին Ռէժիին (coût de revient)։ Այս հաշուով՝ արժէգինը վաճառման գինին 25,194 %ը կ'բռնէ, ինչ որ նախորդ տարեշրջանին վրայ 2,525 %ի տաւելութիւն մը ցոյց կուտայ։ Ասոր պատճառն ալ այն է որ Ռէժին աւելի աժան ծխախոտ սկսած է գործածել, յաճախորդները գոհացնելու համար, և կ'ուզէ ալ աղէկ տեսակ ծխախոտի թերթերու պատրաստ մթերքը պակսեցնել։—Այս տարեշրջանին 158,926 ոսկի ամսաթոշակ տրուեցաւ պաշտօնեաներուն, մինչ 1903—1904ին տրուած էր 156,080 ոսկի, որով այս տարեշրջանին 2,846 ոսկի աւելի տրուած կ'ըլլայ։—Ռէժիի դէտերու համար ծախք եղաւ 255,230 ոսկի, անցեալ տարեշրջանէն 2,675 ոսկի պակաս։ Բռնուեցաւ 231,539 քիլօ մաքսանենգեալ ծխախոտ, և 722 գործիք՝ ծխախոտ գործելու յատուկ։ — 1903—1904 յանձնառողչէք (պէյիէ) տրուեցաւ 204,697 ոսկի, մինչ 1904—1905ին տրուեցաւ 201,452, այսինքն 3,245 ոսկի պակաս, որ արդիւնք է վաճառման նուազութեան։ Յանձնառողչէքի մէջին գումարն եղաւ 9,109 %, ընդդէմ 9,012 %ին 1903—1904 տարւոյ։—Գործուած ծխախոտներու համար ծախք եղաւ 21րդ տարեշրջանին՝ 36,617 ոսկի, նախորդ տարեշրջանէն 2,990 ոսկի պակաս։ Այս նուազում յառաջ եկած է նոյն պատճառներով, որք բացատրուեցան վերեւ։ —Մշակութեան համար 20րդ տարեշրջանին ծախք եղաւ 40,887 ոսկի, իսկ այս տարեշրջանին՝ 39,535 ոսկի, այսինքն 1,351 ոսկի պակաս։ 1903—1904 մշակեալ ծխախոտի քանակութիւնն էր 48,985,760 քիլօ, իսկ 1904—1905՝ 24,204,809։ Նախորդ տարեշրջանին մէջ եղած ծախքերուն հետ բաղդատմամբ, այս տարեշրջանին 3,108 ոսկի պակաս ծախք եղաւ։ — 20րդ տարեշրջանին գոյացած հասոյթներու վրայ բաժնետէրերուն բաժինն է —140,800 ոսկի, գոյացած՝ դրամագլխին 8 % տոկոսով և 92,063 ոսկի՝ գոյացած շահէն 35 %ով. համագումար 233,063 ոսկի։ Ըստ 1904 Հոկտ. 6/19ին, ընդհանուր Ժողովին կողմէ տրուած որոշման, այս գումարը բաժնուեցաւ հետեւեալ կերպով.— Թիւ 20 կտրոնին՝ 167,200 ոսկի, կանոնական պահեստ՝ 11,653 ոսկի, յաւելուածական պահեստ, որպէս զի ամբողջանայ ընկերութեան դրամագլուխին քառորդը՝ 440,000 ոսկին՝ 24,634 ոսկի. բաժնետէրերուն և Վարչական Խորհրդոյ անդամներուն շահ՝ նոր հաշուոյն անցած՝ 26,343 ոսկի, Վարչական Խորհրդոյ բաժին՝ 3,242. համագումար՝ 233,063 օսմ. ոսկի։ — Փետր. 28/13 Մարտ 1905ին ընդհանուր կացութիւնն հետեւեալն էր. — ԳՈՅՔ.— Արժեթուղթ դրամատան մէջ՝ 5,980 ոսկի, շահագործութեան դրուած դրամագլուխ՝ 488,025 ոսկի, Փետրուար 28ին գանձելի տոկոս՝ 7,572 ոսկի. համագումար՝ 501,578 օսմ. ոսկի։ —ՊԱՐՏՔ.— Պահեստ՝ 440,000 ոսկի, շահ 21րդ տարեշրջանի՝ 14,298 ոսկի, նոր հաշուոյն անցած շահ՝ 26,363 ոսկի, Ռէժիին ընթացիկ հաշիւը՝ 4,027 ոսկի, մասնաւոր պահեստ՝ 13,165 ոսկի, 16—20 թիւ կտրոնին 3,743 ոսկի։ —Համագումար՝ 501,578 օսմ. ոսկի։ —Վարչական Խորհուրդն որոշեց 19 ֆր. շահաբաժին տալ առ մէն մի բաժնեթուղթ։ — Բաժնետէր Մ. Մարինօ ճառ մը խօսելով, յանուն բաժնետէրերուն շնորհակալութիւն յայտնեց Վարչական Խորհուրդին, Ընդհ. Տնօրէնութեան և Ռէժիի պաշտօնէութեան՝ իրենց տարած աշխատութեան համար, որ այնքան լաւ արդիւնք տուաւ։

ՅՈՒՆԱՑ Պատրիարքարանի պաշտօնաթերթը կ'հրատարակէ Տ. Եօաքիմ Պատրիարքին՝ առ Պատրիարքն Երուսաղէմի ուղղած մէկ նամակը, որու մէջ կ'ըսէ թէ Պուքովինոյի Երուսաղէմապատկան կալուածներու վաճառման մասնագրութիւնը մտահոգութեամբ լսած են ինքն և իր շուրջը գտնուողները, որովհետեւ այդ վաճառումը շատ աննպաստ հետեւանքներ պիտի ունենար։ Հին ժամանակներէ ի վեր կտակներով եկեղեցիին նուիրուած ստացուածքներ երբ մանաւանդ տարբեր դաւանութեան պատկանողներու կ'ծախուին, շատ ցաւալի տպաւորութիւն մը կ'ենթարկուին Օրթոտոքս Ցեղերը, մանաւանդ թէ առիկա կրնայ իր ցաւալի հակազդեցութիւնն ունենալ Յոյն Եկեղեցւոյ սեփական ուրիշ կալուածներու ալ վրայ։ Տ. Եօաքիմ Պատրիարք ի վերջոյ կ'յանձնարարէ Երուսաղէմի Պատրիարքին, որ վերջնական որոշում տալէ առաջ խնդիրին անգամ մ'ալ ուսումնասիրէ իր Սինոդին հետ։ Մնաց որ այդ կալուածներու վաճառումը չպիտի կրնայ Երուսաղէմի վանքին նիւթական կացութիւնը բարւոքել։

ՌՈՒՄԷԼԻԻ ՆԱՀԱՆԳՆԵՐԸ. — Պատկանեալ պաշտօնատուն հասած տեղեկութիւններէ կ'հասկցուի թէ՝ շնորհիւ ՎՍՀ. ԿԱՅՍԵՐ Ռումէլիի նահանգներուն ամէն կողմերը կատարեալ անդորրութիւն կ'տիրէ, և ամէն ոք հանգիստ իր գործին կ'զբաղի։

ՕՏԱՐ ՑՈՐԵՆՆԵՐՆ ԵՒ ԱԼԻՒՐՆԵՐԸ. — Անատօլուի երկաթուղեաց երկարաձգումներէն և Թուրքիոյ ծովեզերաց վրայ շոգենաւ բանեցուելէն ի վեր, մերձաւոր թէ հեռաւոր գաւառներու բերքերու փոխադրութիւնը մեծապէս դիւրացած ըլլալուն հակառակ, ստուգուած ըլլալով որ արտասահմանէն եկող ցորեն և ալիւր դարձեալ կ'մրցին տեղական բերքերուն, ինչ որ արդիւնք է տեղական ցորեններու համար լաւ սերմնցու չգտնուելուն, զեկուցուած է պատկանեալ պաշտօնատանց որպէս զի ընտիր տեսակէ սերմնցուներ փութով զրկուին գաւառները։

ԱՅՏԸՆԻ անտառաց և հանքաց հասոյթն այս տարի Մարտ 1էն մինչեւ Օգս. 31 եղած է 2,884,872 ղր. և գանձումները՝ 2,857,238 ղր.։ Անցեալ տարի նոյն ժամանակամիջոցի հասոյթն էր 2,785,706 ղր., և գանձումները՝ 2,610,381 ղր., որով այս տարէ 99,166 ղր. հասոյթի և 247,357 ղր. գանձմանց տաւելութիւն կայ։

ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ Ժողովը որոշած է բժշկական քննութեան ենթարկել Անթալիոյ ժամանումները։—Սեպտ. 12ին Ե. գիւղասի մէջ ժանտախտի ոչ և դէպք չէ պատահած։—Համպուրկի մէջ Օգոստ. 22էն ի վեր քոլերայի ոչ և դէպք պատահած չըլլալով, ջնջուած են ծիսրը Մուսթաֆա Փաշայի, Օտեսայի, Դանուբի, Վառնայի և Քէօստէնճէի ճամբով եկողներուն դէմ ի գործ դրուած առողջապահական միջոցներն, որով ճամբորդներն հականեխման կ'ենթարկուէին, և իրենց բնակարաններն հինգ օր բժշկական հսկողութեան տակ կ'առնուէին։ Բայց Գերմանիոյ Բօզէն նահանգէն եկողներուն դէմ նոյն միջոցները պիտի շարունակուին։

ՌՃԻՐ.— Սիւլէյմանիէի կողմը Վանցի Շիւքրի կինն և բնակիր Սղերդցի Մուսթաֆայի զաքանչն երէկ կռիւի բռնուեցան։ Իրիկունը Մուսթաֆա տուն գալուն ցերեկուան կռիւը պատմեց անոր, որով Մուսթաֆա բարկանալով, Շիւքրիի տունը գնաց և դուրս կանչեց։ Շիւքրի դուրս ելլելուն՝ Մուսթաֆայի զաքանչն անոր թեւէն բռնեց և Մուսթաֆա ալ դաշոյնով ուժ տեղէ վիրաւորեց զայն ծանրապէս և փախաւ. բայց ոստիկանութիւնն յաջողեցաւ ձերբակալել ոճրագործը, որ խոստովանեցաւ գործած ոճիրը։

ՑՈՐԵՆ. — Այսօր հասան 12 վաքօն Անատօլուէ և Ռումէլիէ։ Գիներն են. —Անատօլու սպիտակ ցորեն էքսթրա 37½—38 փր. օխան։ A 37—37½, B 36½—37. խառն 32—34. Կարծր Անատօլու 37½—38. Էքսթրա 40—41. Կակուղ Ռումէլի 36½—37. Կարծր Ռումէլի 38½—39. Կակուղ Ռումանիա 37—37½։

ԱՆՁՆԱՍՊԱՆՈՒԹԻՒՆ Մ. ԲԱՆՏԻԱ ԷՎԼԷՆԻՏԻՍԻ

Երէկ պատմեցինք Մ. Բանտիա Էվլէնիտիսի անձնասպանութեան փորձը։ Այս առտու ստոյգ աղբիւրէ լսեցինք որ դժբախտ երիտասարդը կ'ապրի դեռ. բայց ալ աչքն անդարձ կորած է. սարսռազդեցիկ խոռոչ մը միայն կ'տեսնուի անոր տեղ, ուրկէ շարունակ արիւն կ'հոսի։ Ատրճանակի գնտակը դեռ կարելի չէ եղած դուրս հանել, և կ'մնայ գանկին մէջ, ուղեղին շատ մօտ, բայց բժիշկները կ'յուսան որ կարելի պիտի ըլլայ գործողութիւն մը կատարել, և դուրս հանել զայն։ Տարաբախտ երիտասարդն անհնարին ցաւերու մէջ կ'տառապի։ Վիճակը տագնապալից է, և ամէն վայրկեան սպասուի վախճանէ մը կ'վախցուի, քանի որ հազիւ 1 սանդիմէդրի հեռաւորութիւն մը կայ ուղեղին և գնդակին միջեւ։ Կարելի չէ ըսել այժմէն թէ նոյն իսկ երբ բժիշկները կարենան դուրս հանել գնտակը, ի՞նչ պիտի ըլլայ ասկէ վերջ դժբախտ երիտասարդին գլխուն վիճակը։ Ընտանիքի անդամներ կ'հսկեն իր մօտ, եւ ամէնէն գուրգուրալից խնամքները կ'մատակարարուին մեղմելու համար անհնարին տառապանքները, որք շարունակ կ'չարչարեն հէք Մ. Բանտիան, որ անկարող է բառ մը իսկ արտասանելու, և յուշակորոյս ինկած է։

Ցուցիչ է ծնողքին վիճակը, որ իրենց առջև ունին իրենց զաւկին այս անակնկալ կացութիւնը։ Տիկին Էվլէնիտիս տառէ իրիկուն ուրախ զուարթ կ'խօսակցէր բարեկամուհիներու հետ, երբ տարաբախտ երիտասարդն իր յուսահատական որոշումն ի գործ դրաւ։ Ամէն կանխահոգ միջոցներ ձեռք առնուեցան իրեն խնայելու համար անհեւլի բօթը. բայց տիկինն յառաջ եկած իրարանցումէն կռահելով թէ բան մը կ'անցնի կ'դառնայ, սուրաց դէպ ի պարտէզ, ուր արդէն կ'վազէր ամէն ոք, և երբ յանկարծ տեսաւ զաւկին արիւնաթաթախ մարմինը, սրտաճմլիկ ճիչ մ'արձակեց եւ փարեցաւ անոր. յուզումն այնքան սաստիկ էր, ինչպէս կարելի է գուշակել, որ հէք տիկինը նուաղեցաւ, և բժշկական անմիջական դարմաններ դժուարաւ կրցան ուշաբերել զինքը։ Դժբախտ երիտասարդին հայրն ևս նուաղման մը ենթարկուեցաւ այս անակնկալ պատահարին ի տես, և այսօր, ամէն կողմէ ցաւակցական այցելութիւններ կ'ընդունի Էվլէնիտէս գերդաստանը, և բազմաթիւ բարեկամներ ու համակրողներ շարունակ լուր կ'առնեն Մ. Բանտիայի վրայ։

ՔՐՈՆԻԿ ՀԱՅ ԵԿԵՂԵՑԻՈՅ

Ռուսճուգի առաջնակարգ վաճառականներէն Սարգիս էֆ. Գույումճեան, որ ծանօթ է կրթական և բարեգործական նպատակներու համար ըրած ձեռնտուութիւններով, այս անգամ մանկապարտէզի և նախապատրաստական վարժարանի յատուկ շէնք մը շինել տուած է իր ծախքով, կրկնայարկ, 1,000 ոսկիով։ Այս շէնքին կառուցումն աւարտելու վրայ է, և Հոկտեմբերի մէջ պիտի կատարուի բացման հանդէսը։ Ս. Պատրիարքն օրհնութեան կոնդակ պիտի զրկէ յիշեալ կրթասէր ազգայինին։

